ԴՊՐՈՑ

# ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ՂՈՂԱՆՋՆԵՐԻ ՆԵՐՔՈ

## «ԿՈՐԱԾ» ԶԱՆԳԸ ՀՆՉԵՑ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ




***Շրջանավարտների իր 82-րդ հոսքը Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցը ճանապարհեց մայիսի 25-ին: Ու որքան էլ ավանդական, տրամաբանական ու սպասված, այս Վերջին զանգը նույնպես առանձնացավ իր անկրկնելիությամբ:***

Ավարտականների թիվն այս տարի տասնութ էր: Դպրոցի բեմում մեծ սպասելիքներ, հույսեր, խոստովանություն, խոստում ու բյուր ժպիտներ էին: Իսկ դահլիճը փոխադարձում էր սիրով, հպարտությամբ՝ մանկավարժներն ու դասղեկ Սիլվա Սարուխանյանն իրենց ավանդի ու սերմանած գիտելիքի, իսկ հյուրերը՝ հասուն կյանք մտնող գեղեցիկ ու խոստումնալից սերնդի համար:

Հանդիսույթը սկսվեց այն պահից, երբ հայտարարեցին, որ «կորել է» Զանգը: Շրջանավարտներն այն «փնտրում էին»՝ խոսելով հայերեն, վրացերեն, ռուսերեն, անգլերեն... այնպես, ինչպես հարիր է Վրաստանի հայկական դպրոցի սանին՝ տիրապետել միանգամից չորս լեզուների: Ի վերջո, Զանգը «հայտնվեց» տնօրեն Իրինա Ժամկոչյանի մոտ, ում եւ վերապահված էր հնչեցնել այն: Հնչեցնել ու նաեւ սրտի խոսք ասել իր աչքի առաջ մեծացած այս հոսքին եւս: Նա հպարտությամբ արձանագրեց, որ դասարանն ունի ոսկե մեդալակիր՝ Մարիամ Փերիխանյան, ունի Վրաց լեզվի Ազգային ուսումնական օլիմպիադայի հաղթող՝ Գարրի Աբրահամյան, Մաթեմատիկայի օլիմպիադայի հաղթող՝ Դավիթ Գալստյան, ունի... «շնորհալիների մի ամբողջ փունջ, ընդամենը 18 հոգանոց դասարանում»,- շեշտեց Իրինա Ժամկոչյանը:

Շրջանավարտներին իրենց պատգամն ու բարեմաղթանքն ուղղեցին նաեւ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի կրթության եւ գիտության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը, «Վրաստանի հայերի միության» նախագահ Հենրիխ Մուրադյանը, բազմավաստակ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը, «Վիրահայ համայնք» ՀԿ նախագահ Սամվել Մկրտչյանը, դպրոցի ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը: Օրվա հերոսներին օրհնության իր խոսքը բերեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ով հորդորեց դպրոցը ավարտելուց հետո եւս ապրել համայնքային կյանքով՝ որպես նրա աջակից ու սրտացավ անդամ:

Այս տարի եւս Վերջին զանգը խորհրդանշեց Նորը, դարձավ ուղեգիր դեպի հասուն ու մեծ կյանք...

Նշենք, որ դպրոցում այսօր սովորում է 285 աշակերտ: Առաջինդասարանցիների գրանցումը դեռ ավարտված չէ, ուստի տնօրինությունից հայտնում են, որ առ այս պահը հայտագրված է ընդամենը 15 երեխա: Մինչդեռ միայն Թբիլիսիում ռուսական դպրոց են գրանցվել 500-ը, որի գերակշիռ մասը՝ Վրաստանի հայազգի քաղաքացիներ են...

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

## ՀԱՍՈՒՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԵԳԻՐ՝ 51 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Ախալքալաքիի Հովհ.Թումանյանի անվան թիվ 1 հանրային դպրոցի բակը տոնական էր ու հանդիսավոր: Առիթը 51 շրջանավարտներն էին, կայացած, հասուն պատանիներ եւ աղջիկներ, ովքեր պատրաստ են կյանք մտնելու իրենց երազանքներով, կարողություններով ու ձգտումներով:

Նրանց մեջ կան լավագույն աշակերտներ եւ գերազանցիկներ: Ոսկե մեդալի հավանական թեկնածուներ են ներկայացվել Հրանուշ Ստեփանյանը, Սյուզաննա Հարությունյանը, Վարազդատ Գաբրելյանը:

Ցանկանում ենք մեր բոլոր շրջանավարտներին բարի երթ...

Թող որ կյանքի ճանապարհին ունենան հաճելի փնտրտուքներ եւ հաղթանակներ: Թող որ ձեր ապագան լինի միշտ լուսավոր:



ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

*Սիրելի «Վրաստան» թերթի խմբագրություն, մեր խնդրանքն է հրապարակել այս նամակն իբրեւ երախտիք այն կրթօջախին, որ հարազատ դարձավ այս երկու ամիսների ընթացքում: Շնորհակալ ենք բոլոր այն ուսուցիչներին, ովքեր մեզ՝ Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի հոգեբանության եւ կրթության գիտությունների (բազմալեզու կրթության) ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներիս (ղեկավար՝ Կախա Գաբունիա) ոչ միայն գործնականում ինքնադրսեւորվելու հնարավորություն ընձեռեցին, այլեւ ճիշտ ուղի մատնանշեցին՝ կիսելով իրենց բազմամյա փորձն ու իմտությունները: Մասնագիտական մեր առաջին քայլերն սկսեցինք Թբիլիսիի թիվ 103 հանրային դպրոցում՝ տնօրեն Արչիլ Չխաիձեի եւ փոխտնօրեն Հասմիկ Պապիկյանի աջակ-*




*ցությամբ: Ընդամենը ութ, բայց հավատացեք, բովանդակային առումով քառակիորեն շատ թվացող Բնության, Վրաց եւ Հայոց լեզուների դասաժամերի ընթացքում, Հասմիկ Պապիկյանի, ուսուցիչներ՝ Նինո Օրթավիձեի, Լուիզա Մուրադյանի եւ Զամիրա Բաբերցյանի շնորհիվ, մենք շատ բան սովորեցինք եւ համոզված ենք, որ այդ ամենը մանկավարժական մեր գործունեության հիմնաքարն է դառնալու: Ուստի, «Վրաստան» թերթի միջոցով մեր խոնարհումն ենք բերում ձեզ՝ թիվ 103 հանրային դպրոցի ողջ անձնակազմին՝ հոգատարության, ջերմության ու երիտասարդներիս գրկաբաց ընդունելու համար:*

*Մենք ձեռք բերեցինք ոչ միայն իմտություն, այլեւ համատեղ ու խմբային աշխատանքի փորձ, որ կարծում ենք նույնպես շատ կարեւոր է արդյունավետ աշխատանքի համար:*

*Սիրելի ուսուցիչներ, շնորհակալ ենք ձեզ ամենի համար: Ուզում ենք միշտ առողջ, նույն եռանդով ու գործունակ տեսնել ձեզ: Որքան էլ երիտասարդ, մենք փորձառուից սովորելու կարիք միշտ ենք ունենալու:*

*Բարին ընդ ձեզ ու ձեր ընտանիքներին, գնում ենք նորեն հանդիպելու, վերադառնալու հույս ու հավատով:*

***Երախտագիտությամբ՝ Աստղիկ Գալոյան, Կատյա Չախոյան եւ Մարիաննա Հակոբյան:***

ԹԱՏՐՈՆ

# ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍԸ... ԱԳՌԱՎՆ ԷՐ

***Այս վերջին շրջանում «Վրաստան» թերթի գրեթե յուրաքանչյուր համարում հրապարակում ենք ադամյանցիների առաջնախաղի մասին պատմող նյութեր: Իսկապես ողջունելի է, որ չնայած շենքի բացակայության, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը շարունակում է հաճելին մատուցել՝ իրեն կարոտել չհասցնող հանդիսատեսին:***



Մայիսի 27-ին Թբիլիսիի Ալ.Գրիբոյեդովի անվան պետական ակադեմիական ռուսական դրամատիկական թատրոնում ադամյանցիները ներկայացան երեւանցի արձակագիր եւ բանաստեղծ Արմենուհի Սիսյանի «Ագռավն ասաց» մոնոդրամայով: Բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն էր, իսկ գլխավոր եւ միակ դերակատարը՝ երիտասարդ դերասան Աշոտ Սիմոնյանը:

Արմենուհի Սիսյանը, ով ներկա էր դահլիճում, թարգմանվել է աշխարհի ավելի քան տասը լեզուներով, նույնքան գրքերի հեղինակ է, որից երկուսը տպագրվել են Ճապոնիայում: Նա բազմաթիվ միջազգային մրցանակների դափնեկիր է եւ հաղթող, ճանաչված անհատականություն. այդուհանդերձ, որպես դրամատուրգ նրա օծումը, փաստորեն, կայացավ հենց Թբիլիսիի 163-ամյա հայոց թատրոնում: «Ագռավն ասաց»-ը գրողի առաջին պիեսն էր, որ բեմադրվեց:

Ներկայացման ավարտին, Արմենուհին անակնկալից շփոթված էր, հիացած՝ բեմադրիչի ու դերասանի համագործակցությամբ ծնված կատարելությունից, նաեւ՝ երախտապարտ եւ հուզված իր առաջնեկի բեմելից. ***«...ստացա ավելին, քան ակնկալում էի»,-*** խոստովանեց նա:

- ***Վիրահայոց թատրոնն ունի այդ ավանդույթը,-*** մեզ հետ զրույցում ասաց Արմեն Բայանդուրյանը, ով կարդալով պիեսը, անմիջապես որոշել էր բեմադրել այն:- ***Տարիներ առաջ իբրեւ դրամատուրգի օծեցինք նաեւ Արա Վահունուն, ապա նաեւ՝ ծննունդով թբիլիսցի, անվանի Գուրգեն Խանջյանին...***

Բեմադրիչը ոգեւորված էր: Ոգեւորված ռեժիսորական հանգուցալուծումը ճիշտ ներկայացրած դերասանի՝ Աշոտ Սիմոնյանի վարպետությամբ, Լեւոն Ունզունյանի կողմից երաժշտության համահունչ ընտրությամբ եւ Աննա Սուպրոնաձեի բեմական ձեւավորմամբ:

«Ագռավն ասաց»-ը խոհափիլիսոփայական գրականության նմուշ է, հետեւաբար՝ բարդ ներկայացում: Հենց միայն այն, որ բեմում նրա հաջողությունը պայմանավորված է միայն մեկ դերասանի խաղով, նրա դերասանական ձիրքի բազմակողմանի դրսեւորմամբ՝ խոսքի ելեւէջմամբ, դիմախաղով, շարժումներով եւ ամենակարեւորը՝ անմիջականությամբ, համակ ուշադրություն գրավելու վարպետությամբ... իսկ այս ամենը, ու դեռ ավելին, իսկապես հաջողեցրեց հանդիսատեսի կողմից արդեն իսկ ճանաչում ու սեր վայելող ադամյանցին՝ Աշոտ Սիմոնյանը:

- ***Կարդացի ինձ անծանոթ պիեսն ու գտա ինը,-*** խոստովանում է Աշոտ Սիմոնյանը,- ***շոշափվող թեմաներն ինձ հարազատ էին, բայց ես գտա ամենից ամենան, ու դա օգնեց զգալ պիեսը, խմորել իմ մեջ ու՝ ասել, ասել այն, ինչ թերեւս հենց մարդուն է վերաբերում:***

Մայիսի 29-ին «Ագռավն ասաց»-ը ներկայացավ նաեւ Երեւանի Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնում, արժանանալով բարձր գնահատականի՝ տեղի արվեստասերի ու մասնագետի կողմից: Մոնոդրամայի հեղինակ Արմենուհի Սիսյանը նեկա գտնվեց նաեւ երեւանյան առաջնախաղին: Այստեղ էին նաեւ Հայաստանի մշակույթի նախարարի պաշտոնակատար Նազենի Ղարիբյանը, Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը, Թատերական գործիչների նախագահ Հակոբ Ղազանչյանը, թատերագետ Նվարդ Ասատրյանը, դրամատուրգ Կարինե Խոդիկյանը, «Սայաթ-Նովա» աշուղական համույթի ղեկավար Թովմաս Պողոսյանը, «Հայկական հանրագիտարանի» գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը, «Վահան Տերյան» հիմնադրամի նախագահ Առուշան Հակոբյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, արվեստասեր հանրություն:

...Իսկ մեր թատրոնում անակնկալները շարունակվում են: Թբիլիսցի անվանի ռեժիսոր Լեւան Սվանաձեն բեմադրում է Էդվարդ Օլբիի «Ի՞նչ պատահեց գազանանոցում» պիեսը:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***
*Լուսանկարը՝*
***ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

# ՄԱՔՐՈՒՄ ԵՆՔ ՕՐԳԱՆԻԶՄԸ ԲՐՆՁԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ



***Լսել եմ, որ սովորական բրինձը այնպիսի հատկություններ ունի, որոնց մասին շատ քիչ ենք տեղեկացված, կամ, ընդհանրապես, տեղեկություն չունենք։ Օրինակ՝ կարդացել եմ, որ չինացիները բրինձի օգնությամբ կարողանում են մաքրել իրենց օրգանիզմը՝ դրանում կուտակվող թունավոր եւ վնասակար նյութերից։ Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը։***

***Վ.Մուրադյան***

***Մառնեուլի***

Բրնձի՝ օրգանիզմը մաքրելու զարմանալի հատկության մասին գիտեին դեռ Հին Չինաստանում: Ճիշտ օգտագործման դեպքում՝ այն ունակ է օրգանիզմից հանել բոլոր վնասակար թունավոր նյութերը, շլակները, հոդերում կուտակված աղը: Բրինձը արդյունավետորեն պայքարում է աղիքների եւ լյարդի աղտոտվածությունների դեմ:

Տնային պայմաններում կարելի է պատրաստել բուժիչ բրինձ, գլխավոր խնդիրը՝ դրանից օսլան, թրջելու միջոցով, հանելն է:

Եվ այսպես, վերցնում եք ձեր տարիքի չափ ճաշի գդալ բրինձ, լվանում եք եւ լցնում ապակե բանկայի մեջ: Վրան լցնում եք գոլ եռացրած ջուր, փակում կափարիչով եւ՝ գիշերը թողնում սառնարանում:

Առավոտյան թափում եք ջուրը, վերցնում 1 ճաշի գդալ բրինձ եւ եփում 4-5 րոպե: Հիշեք, աղ կտրականապես չի կարելի ավելացնել: Նախաճաշեք ստացված շիլայով մինչեւ առավոտյան 7:30, իսկ մնացած բրնձի վրա կրկին ջուր լցրեք եւ դրեք սառնարանում: Մաքրման ընթացակարգը տեւում է մինչեւ բրինձը վերջանա:

Այսպիսի նախաճաշերի օգնությամբ դուք ձեզ ավելի լավ կզգաք, ինչը կարտացոլվի նաեւ ձեր արտաքինի վրա: Միակ պայմանը՝ փորձեք, այդ նախաճաշից հետո, 3 ժամ սնունդ չօգտագործել:

Երբեմն, ամենասովորական մթերքները կարող են հիանալի բուժման միջոց հանդիսանալ շատ հիվանդությունների:

# 6 ԿԱՐԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՆԻՀԱՐԵԼ

***Ոչ բոլոր գեր մարդիկ են ցանկանում նիհարել, ոմանք շատ հարմարավետ են զգում իրենց՝ ավելորդ կիլոգրամների հետ: Ահա 6 օգտակար խորհուրդ նրանց, ովքեր ունեն «ավելորդ մասեր»:***



**1.Ինքներդ ձեզ խոստովանեք, որ գեր եք**

Ոչ թե մի քիչ քաշ եք ավելացրել ծննդյա ընթացքում, այլ գեր եք: Մարդիկ տարբեր են՝ բարձրահասակ, գեր, խարտյաշ, կապուտաչյա: Որքան արագ դուք վարժվեք այդ մտքին, այնքան քիչ կբարդույթավորվեք:

**2.Դադարեք ամեն անգամ հիշեցնել, որ դուք գեր եք**

Քիչ կատակեք եւ հոգոց մի հանեք հայելու մեջ նայելիս: Ամեն անգամ, երբ դուք դա անում եք, ինքներդ ձեզ կշտամբում եք «սխալ» արտաքինի համար, ձեւավորելով մեղքի զգացում:

**3.Նրբագեղ հագնվել կարելի է ցանկացած քաշով**

Եթե դժվար է ձեզ հարմար չափսով հագուստ գտնել խանութներում, գնացեք գերերի համար նախատեսված հագուստների խանութներ: Սովորաբար այդ խանութներին հագուստ տրամադրողները գիտեն, թե ինչպիսի հագուստ է սազում գերերին:

**4.Սիրո՞ւմ եք ուտել՝ կերեք հաճույքով**

Եվ առանց խղճի խայթի, այն չի օգնում նիհարել, միայն նպաստում է սննդային նեւրոզների առաջացմանը:

**5.Շարժվեք**

Ավելի լավ է տեղը տեղին ուտել, հետո լավ զբոսնել, քան հրաժարվել ընթրիքից եւ նստել հեռուստացույցի առջեւ: Հանելով ձեր կյանքից «դիետա» հասկացությունը՝ ավելի հեշտ կլինի ավելացնել «սպորտ»-ը: Ավելի ճիշտ՝ ոչ թե հենց սպորտը, այլ՝ շարժումը: Զբոսանքը, մարմնամարզությունը, պարերը, լողը: Ավելորդ քաշի դեպքում՝ վտանգավորը ավելի շատ քաշ հավաքելն է, ինչը կհանգեցնի լուրջ խնդիրների, իսկ շարժումը կպակասեցնի այդ վտանգը:

**6.Ամեն ամիս ստուգեք արյան մեջ շաքարի պարունակությունը**

Ավելորդ քաշը դիաբետի առաջացման հիմնական պատճառներից է:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎՐԱ

***Անչափահասների վիճակը գնահատելու առումով՝ կարեւոր նշանակություն ունի ոչ միայն անչափահասների վարքագծի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության, այլեւ նրանց կողմից դրսեւորվող վարքագծի վերաբերյալ առկա այլընտրանքային տեղեկատվության ուսումնասիրությունը: Համացանցը, հաճախ, ժամանցը լցնելու կամ տեղեկություն ստանալու միջոց է հանդիսանում:***



Սակայն չմոռանանք, որ այն, հատկապես անչափահասների կյանքում, հաճախ վտանգավոր գործոն է դառնում: Ո'չ օրենսդրությունը, ո'չ էլ սոցցանցերը չեն կարող վերահսկել կամ սահմանափակել անչափահասների մուտքը սոցցանցեր: Հիմնական գործոնը մնում է ծնողներին: Ծնողները պետք է տեղյակ լինեն երեխաների սոցցանցերում կատարած աշխատանքներին: Պետք չէ նրանց արգելել, քանի որ դա ունենում է հակառակ ազդեցություն, եւ միշտ հետաքրքրասիրությունն ավելի է մեծանում անչափահասների մոտ: Հոգեբանը ծնողներին խորհուրդ է տալիս կտրուկ արգելքներ չկիրառել՝ երեխային զրկելով համակարգչից. «Ծնողը պետք է այլընտրանքային տարբերակ մտածի, որով կարող է երեխային զբաղեցնել, քանի որ այն բացը, որ կյանքում պատանին փորձում է ունենալ վիրտուալ տիրույթում: Զրկելով համակարգչից՝ դրա փոխարեն ի՞նչ կարող են առաջարկել: Պետք է կապը պահպանել անչափահասի հետ, որպեսզի ծնողին վստահի, խոսի ծնողի հետ, իսկ նրան արգելելով, ավելի վատ արդյունքի կհասնեք»:

Ըստ հոգեբանի՝ համակարգիչը եւ առավել եւս խաղերն ու սոցցանցերը անչափահասների մոտ առաջացնում են իրականությունից առանձնանալու ցանկություն եւ ազդեցություն են գործում ոչ միայն հոգեկան աշխարհի, այլեւ ընդհանուր առողջության վրա: Շատ հաճախ իրենց համար, իդեալական կերպարով համացանցում ներկայանալու պատճառներից մեկը, բարդույթներն են: Սակայն վիրտուալ վտանգները միայն վիրտուալ բարդույթներով չեն սահմանափակվում: Կարծիք կա, որ վիրտուալ տարածքում ակտիվ են սատանիստական կազմակերպությունները եւ ենթամշակույթի ներկայացուցիչները:

Տասնչորս տարեկան անչափահասի մայրը, վերջին ժամանակահատվածում, փոփոխություններ էր նկատել որդու պահելաձեւի մեջ: Մայրը նշում է, որ երեխան դարձել էր բավական ագրեսիվ եւ ընդհանրապես իր վարքագծին անհամապատասխան արարքներ էր թույլ տալիս:

«Ես, շատ լավ ճանաչելով իմ երեխային, նկատել էի նրա մոտ շատ ագրեսիվ պահվածք եւ չէի հասկանում՝ դա ինչից կարող էր լինել, քանի որ նա, համակարգչով խաղեր խաղալիս, երբ պարտվում էր, տրամադրությունն ընկնում էր, եւ դա արդեն սովորական էր դարձել ինձ համար: Սակայն, այս անգամ, երբ նրա մոտ դարձյալ տրամադրության անկում էի նկատել, ես հասկացա, որ ոչ թե խաղի հետ կապ ուներ, այլ վախի: Փորձեցի որոշ ժամանակահատված հետեւել նրան եւ նկատեցի, որ հեռախոսով ինչ-որ մեկի կողմից հանձնարարություններ է ստանում եւ՝ փորձում դրանք կատարել: Նա ագրեսիվ պահեց իրեն, երբ արգելել էինք շփվել հեռախոսով ու անընդհատ մտածում էր այդ «հանձնարարությունները» կատարելու մասին ու միշտ կրկնում, եթե հանձնարարությունս չկատարեմ՝ կգան իմ հետեւից: Ես, որպես ծնող, դիմեցի մասնագետների եւ ինձ ասացին, որ շատ ճիշտ ժամանակին եմ նկատել այդ խնդիրը եւ ճիշտ ժամանակին եմ դիմել իրենց, հակառակ դեպքում չէր բացառվում, որ երեխան ինչ-ինչ քայլերի գնար: Որոշ ժամանակ երեխայիս հետ աշխատեց մի շատ լավ հոգեբան, ում ես շատ շնորհակալ եմ, եւ օրեցօր նկատեցինք, որ նրա մոտ գնալով անցնում է սթրեսային վիճակը: Այժմ իմ երեխան ձերբազատվել է այդ խնդրից եւ բացարձակապես չի օգտվում համացանցից՝ բացառությամբ դասերի դեպքում, եթե անհրաժեշտ է լինում»:

Նշված օրինակները, իհարկե, բազմազան են: Սակայն դրանց լուծում տալը ոչ բոլորի դեպքում է լավ ավարտ ունենում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# Ո՞Ր ԵՐԿԻՐՆ ՈՒՆԻ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ



***Ինչպես տեղեկացրել է Popular Mechanics-ը՝ Չինաստանի ժողովրդաազատագրական բանակի ռազմածովային նավատորմը խոշորագույնն է դարձել աշխարհում:***

Հրատարակությունը նշում է, որ վերջերս չինական մարտանավերի (այդ թվում՝ ավիակիրների, հածանավերի, էսկադրային ականակիրների, սուզանավերի եւ դեսանտային նավերի) թիվը հասել է 300-ի, ինչը 13 միավորով ավելի է ԱՄՆ-ի համեմատությամբ: Չինաստանի ռազմական նավատորմի հիմքը կազմում են 119 վերջրյա նավեր (23 էսկադրային ականակիր, 59 ֆրեգատ եւ 37 կորվետ) եւ 76 սուզանավեր: Միացյալ Նահանգներին հաջորդում են Ռուսաստանը (83 նավ), Մեծ Բրիտանիան (75) եւ Ավստրալիան (48):

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ Հնդկաստանում ասում են. «Ուզո՞ւմ ես մարդուն ճանաչել, ուրեմն՝ նեղացրու նրան: Մարդն անոթ է: Ինչով որ լցված է, այն էլ նրանից դուրս է ժայթքում»:

☞ Եթե ինչ-որ մեկը քեզ մեկ անգամ դավաճանել է, դա նրա մեղքն է, իսկ եթե 2-րդ անգամ է դավաճանում, դա քո մեղքն է:

☞ Սովորիր ուրիշների սխալների վրա: Հնարավոր չէ այնքան երկար ապրել, որ դրանք բոլորը փորձարկես քեզ վրա:

☞ Մեծագույն ուղեղները քննարկում են գաղափարները, միջինները՝ իրադարձությունները, իսկ փոքր, մանր ուղեղները՝ մարդկանց:

☞ Ուշադիր եղիր հյուրիդ նկատմամբ, անգամ, եթե նա քո թշնամին է: Նույնիսկ կացինը ձեռքին անտառահատին ծառը չի մերժում ստվեր տրամադրել:

☞ Չի եղել, չկա ու չի կարող լինել այնպիսի մարդ, ով արժանի լինի միայն պարսավանքների կամ միայն գովեստների:

☞ Գիտելիքը թաքնված է յուրաքանչյուր իրի մեջ: Կար ժամանակ, երբ աշխարհը գրադարան էր:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

(Սկիզբը` 1-ին էջում)



Նրանք ծաղկեպսակ դրեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեցին: Ամենայն Հայոց կաթողիկոսը «Տերունական աղոթք» հնչեցրեց:

Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության թանգարանում, մայիսի 28-ին, հանդիսավոր արարողությամբ կայացավ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր, պետական քաղաքական գործիչ Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակին նվիրված հուշակոթողի բացումը: Վեց մետր բարձրությամբ կարմիր տուֆից կերտված համալիրը. կառուցված Տորոնտոյում` Հայաստանի պատվո հյուպատոս Վան Լապոյանի բարերարությամբ, հեղինակել են ճարտարապետ Հայկ Ասատրյանը եւ քանդակագործ Արտակ Համբարձումյանը:



Հուշարձանը տեղադրվել է զանգաշտարակի մոտակայքում, այնտեղ, ուր թաղված են արցախյան ազատամարտիկները: Խորհրդանշական սիմվոլներն են` սուրը, արծիվները, հավերժության խորհրդանիշը:

Միջոցառմանը մասնակցեցին նաեւ Հայաստանի ազգային ժողովի պատգամավորներ, կառավարության ներկայացուցիչներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ելույթով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ




*Մայիսի 29-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանում, մասնակցեց Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի հերթական նիստի աշխատանքին:*

Նիստը հոբելյանական էր. լրացավ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի ստորագրման եւ կազմակերպության հիմնադրման 5-ամյակը: Նիստին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն առաջարկեց Ղազախստանի առաջին նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին շնորհել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի պատվավոր նախագահի կոչում:

Նիստի օրակարգի շրջանակում` քննարկվեցին 2018թ. ԵԱՏՄ միջազգային գործունեությանը, երրորդ երկրների հետ համագործակցության զարգացմանը, 2019-2020թթ. Միության անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականությանը, ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացմանը, ապրանքների, ծառայությունների ազատ տեղաշարժի ապահովման ուղղությամբ իրականացված քայլերին վերաբերող եւ մի շարք այլ հարցեր:

Հանրագումարելով` Նիկոլ Փաշինյանը Ղազախստանում տեղի ունեցած նիստը, ընդհանուր առմամբ, հաջողված է համարել` նշելով, որ իրենք շարունակելու են աշխատել գործընկեր երկրների հետ` միջտնտեսական կապերի ընդլայնման ուղղությամբ:

Աշխատանքային այցի շրջանակներում` Հայաստանի վարչապետը հանդիպումներ է ունեցել Ղազախստանի նախագահ Քասիմ-Ժոմարտ Տոկաեւի, երկրի առաջին նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի հետ:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ

*Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:*



Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագիր կնքած պետությունից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա կենսաթոշակ նշանակելիս` նախկին օրենսդրությամբ հաշվարկված ստաժը պահպանվում է նույնությամբ, եթե գործող օրենսդրությամբ սահմանված չեն ստաժի հաշվարկման ավելի բարենպաստ պայմաններ, իսկ եթե նշանակվող (հաշվարկված) կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ կենսաթոշակի գործը տեղափոխելը Հայաստանի Հանրապետությունում վճարված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Կենսաթոշակ ստանալու իրավունքն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետեւանքով սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների չափը հաշվարկելիս` ավել վճարված կենսաթոշակի գումարներից հաշվանցվում է ոչ միայն կենսաթոշակի, այլ նաեւ ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստների գումարը (եթե կենսաթոշակառուն նույն ժամանակահատվածում ունի պետական բյուջեից ֆինանսավորվող այլ կենսաթոշակի կամ նպաստի իրավունք)»,- ասված է նախագծի հիմնավորման մեջ:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

***Մայիսի 27-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Էնդրյու Շոֆերի (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա), ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ:***

***Զրուցակիցները քննարկել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը: Նիկոլ Փաշինյանը եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն անդրադարձ կատարեցին նաեւ` մարդասիրական եւ մարդկանց միջեւ շփումների ոլորտներում քայլերի իրականացման հնարավորություններին: Մայիսի 28-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպում ունեցավ նաեւ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպմանը նա վերստին շեշտեց` բանակցային լիարժեք ձեւաչափի վերականգնման եւ հակամարտության կարգավորման բոլոր փուլերին Արցախի մասնակցության անհրաժեշտությունը:Հանդիպմանը քննարկվեցին ադրբեջանա-ղարաբաղյան կարգավորմանը, Արցախի ու Ադրբեջանի սահմաններում տիրող իրավիճակին եւ վերջին զարգացումներին առնչվող հարցեր:***

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

***Մայիսի 26-ին, Հայաստանի արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանի եւ Չինաստանի Պետական խորհրդի անդամ, ԱԳ նախարար Վան Իի Երեւանում կայացած հանդիպման արդյունքներով, երկու երկրների միջեւ ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:***

***Ստորագրված փաստաթղթերն են «ՀՀ Կառավարության եւ ՉԺՀ Կառավարության միջեւ սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագիրը, «ՀՀ եւ ՉԺՀ միջեւ հանձնման մասին» պայմանագիրը, «ՀՀ գյուղատնտեսության նախարարության եւ ՉԺՀ մաքսային գլխավոր վարչության միջեւ ՀՀ-ից ՉԺՀ արտահանվող մեղրի պարենային անվտանգության, անասնաբուժական ոլորտում եւ բույսերի պահպանության մասին» արձանագրությունը:***

## ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

***Հայաստան ժամանած զբոսաշրջիկների քանակը այս տարվա առաջին եռամսյակում, 2018-ի նույն ժամանակի համեմատ, ավելացել է 18 հազար 31-ով: Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2019-ի հունվար-մարտին, Հայաստան են ժամանել 364 հազար 489 զբոսաշրջիկներ` 5.2 տոկոսով ավելի նախորդ տարվա նույն ժամանակի 346 հազար 458-ից: Իսկ այս տարվա հունվար-մարտին Հայաստանից մեկնել են 317 հազար 891 զբոսաշրջիկներ:***

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԻՍՏԸ

*Մայիսի 28-ին տեղի ունեցավ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործկոմի հերթական նիստը, որը վարեց նախագահ Իշխան Զաքարյանը: Գործադիր կոմիտեի անդամները, քննարկեցին 7-րդ Համահայկական խաղերը բարձր մակարդակով անցկացման հետ առնչվող հարցեր:*

Մայիսի 30-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպում ունեցավ համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամների հետ: Նախագահի նստավայրում էին Համահայկական խաղերի գործադիր կոմիտեի 19 երկրներ ներկայացնող անդամները, որոնց թվում էր Վրաստանի ներկայացուցիչ, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Հանդիպմանը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը Հայաստանի նախագահին ներկայացրեց «Միասնություն` սպորտով» նշանաբանով անցկացվելիք համահայկական հերթական խաղերի կազմակերպման հետ կապված մանրամասները: Նրա հաղորդմամբ, ամառային խաղերին այս տարի կմասնակցեն սփյուռքի ավելի քան 70 երկրների, շուրջ 130 քաղաքների ներկայացուցիչներ: Ծրագրում ընդգրկված է 17 մարզաձեւ: Ակնկալվում է 4000 մարզիկների մասնակցություն Հայաստանից, Արցախից եւ աշխարհի տարբեր երկրներից: Նախատեսվում է, որ մոտ 8000 էլ կկազմի հյուրերի թիվը:



Համահայկական խաղերի գործադիր կոմիտեի անդամները հանդիպում ունեցան նաեւ Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանի, իսկ Ստեփանակերտում` Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈՒՆԻՍ

*02.06.2019.*
*Երկրորդ Ծաղկազարդ*



Քրիստոսի Համբարձման տոնի հաջորդ կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Սուրբ Հարությանը նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից: Վերջինս խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, երբ մարդիկ Տիրոջը դիմավորում էին փառաբանությամբ ու ցնծությամբ եւ արմավենու ճյուղեր սփռում Նրա առաջ:

Երկրորդ Ծաղկազարդն արդեն համբարձված Քրիստոսի՝ Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները: Ավանդության համաձայն՝ մի հրեշտակ ամեն օր այցելում էր վիրապում բանտարկված Սբ. Գրիգոր Լուսավորչին: Մի օր նա բացակայում է: Հաջորդ օրը Սբ. Գրիգորը, հարցնելով պատճառը, իմանում է, որ Համբարձման ժամանակ Հիսուս Քրիստոս անցել է հրեշտակների ինը դասերի միջով. ամեն տարի հրեշտակները տոնախմբում էին Տիրոջ Համբարձումը երկինք: Լուսավորչին այցելող հրեշտակը չորրորդ դասից էր, եւ Համբարձման չորրորդ օրը հրեշտակների այդ դասի տոնախմբության հերթն էր:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԱՌԱՆՑ ՏՈՄՍ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ 5 ԼԱՐԻԻ ՉԱՓՈՎ ՏՈՒԳԱՆՔԸ ԴԱՌՆՈՒՄ Է 20 ԼԱՐԻ




*Վրաստանում, հասարակական տրանսպորտով առանց տոմս երթեւեկելու համար, 5 լարիի չափով տուգանքը դառնում է 20 լարի:*

Վրաստանի խորհրդարանն այսօր աջակցել է համապատասխան փոփոխությունը «Վարչական իրավախախտումների օրենսգրքում», որի հեղինակը միջավայրի պաշտպանության կոմիտեն է:

Ուղեւորը պարտավոր կլինի, նախքան ուղեւորության մեկնարկը, ձեռք բերել տոմս կամ էլեկտրոնային վճարման միջոցով վճարել ուղեւորության սակագնով սահմանված գումարը:

Մեկ ամսում տուգանքը չվճարելու դեպքում, այն հասնում է 40 լարիի:

## ՀՈՒՆԻՍԻ 1-Ը՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



Հունիսի 1-ը նշանավորվում է ոչ միայն իբրեւ ամռան առաջին օր, այլեւ Երեխաների պաշտպանության միջազգային օր: Այս տոնը ամենահին միջազգային տոներից մեկն է:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը սահմանվել է դեռեւս 1925 թվականին, Ժնեւում՝ երեխաների պաշտպանության համար հրավիրված, համաշխարհային կոնֆերանսի ընթացքում:

1949թ. Կանանց ժողովրդավարական միջազգային դաշինքը՝ Երեխաների պաշտպանության օր անցկացնելու որոշում է ընդունել:

Առաջին անգամ հունիսի 1-ը՝ որպես Երեխաների պաշտպանության միջազգային օր, նշվել է 1950-ին:

Վրաստանն ու Հայաստանը Երեխաների մասին կոնվենցիան վավերացրել են 1992թ., ապա՝ 1996թ. ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» օրենքը:

# ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՆՇԵԼՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕՐԸ

*Թբիլիսիի քաղաքապետարանը, հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, նախատեսում է կազմակերպել տարբեր միջոցառումներ: Այս մասին հայտնել է Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:*



- Մեր երեխաները պետք է հպարտ լինեն, որ ապրում են ուժեղ Վրաստանում, գեղեցիկ Թբիլիսիում: Եկեք միասին տոնենք այս օրը,- մայրաքաղաքի կառավարման նիստին ասել է քաղաքապետը:

Հիմնական միջոցառումները տեղի կունենան Վակեի այգում, որտեղ ժամը 12:00-ից մինչեւ 18:00-ը նախատեսվում են տարբեր ժամանցային միջոցառումներ:

Օրվա ընթացքում երեխաներին կուրախացնեն նաեւ հեքիաթների եւ մուլտֆիլմերի հերոսները:

Նշենք, որ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ հատուկ միջոցառումներ են նախատեսված նաեւ Վրաստանի մյուս երկրամասերում եւ քաղաքներում:

## ՍՊՈՐՏ

### ՀԱՋՈՂ ԵԼՈՒՅԹՆԵՐ՝ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ




Չինաստանում անցկացվեց ձյուդոյի գրան-պրի մրցաշարը, որտեղ վրաց ձյուդոյիստներ Գիորգի Պապունաշվիլին (90 կգ քաշային կարգ) եւ Լեւան Մաթիաշվիլին (+100 կգ քաշային կարգ) արժանացան բրոնզե մեդալների: Մրցանակակիրներից բացի մրցաշարին մասնակցում էին նաեւ Վալերի Իաշվիլին (73 կգ), Կոբա Մճեդլիշվիլին (81 կգ), Տատո Գրիգալաշվիլին (81 կգ) եւ Ուշանգի Մարգիանին (90 կգ):

Մրցաշարում առանձնակի հաջողության հասավ Հայաստանը ներկայացնող Արամ Գրիգորյանը: Նա 66 կգ քաշային կարգում զբաղեցրեց երկրորդ տեղը եւ արժանացավ արծաթե մեդալի: Ավելի վաղ, մարզիկը դարձավ Օսակաում Մեծ սաղավարտի բրոնզե մեդալակիր:

### ՍՈՒՄՈԻՍՏ ԼԵՎԱՆ ԳՈՐԳԱԶԵՆ (ՏՈՉԻՆՈՇՈ) ՎԵՐԱԴԱՐՁՐԵՑ ՕՁԵԿԻ ՏԻՏՂՈՍԸ



Վրաց սումոիստ Լեւան Գորգաձեն վերադարձրեց օձեկի տիտղոսը: Յոկուձունա Կակուրիուի հետ բախումը տեւեց շատ կարճ:

Այսպիսով, Տոչինոշոնը Նացու Բասյոյին ձեռքբերեց 10-րդ հաղթանակը եւ վերադարձրեց օձեկի տիտղոսը:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մարմնի ոսկորների ամբողջությունը: 4.Հովհ.Թումանյանի ստեղծագործություններից: 9.Տեսողության օրգան: 11.Հայաբնակ գյուղ Վրաստանի Մառնեուլիի շրջանում: 13.Հին գութանը: 14.Գետ Ռուսաստանում: 15.Չեխական ժողովրդական պար: 17.Նավակը վարելու հարմարանք: 20.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 21.Պետություն Ամերիկայում: 22.Բույսի տեսակ: 25.Արեւ, արեգակ: 26.Աֆրիկյան պետություն: 28.Վրաց հայտնի շախմատիստուհի ... Գափրինդաշվիլի: 30.Կռիվ, ձեռնամարտ: 32.Գետ Սիբիրում: 33.Համադասական շաղկապ: 34.Մելքոն Քրիշչյան «... կանթեղ»: 35.Ցուցական դերանուն: 36.Պերուի քաղաքամայրը: 37.«Իմ ...ը» կուսակցություն Հայաստանում: 35.Պետություն Եվրոպայում: 41.Թուրք պատմաբան, ով գրել է Հայոց ցեղասպանության մասին գիրք: 43.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 45.Ծիածանի աստվածուհին: 48.Հրատարակչություն Երեւանում: 51.Պետություն Ասիայում: 52.Գինու գործարան Հայաստանում: 53.Առարկայի դուրս ցցված մաս: 55.Տղամարդու երգչաձայն: 57.Ակսել Բակունցի հերոս: 58.Ծովափնյա քաղաք Ռուսաստանում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Կորալ, բուստ: 3.Ջոբը հայերեն: 4.Խոռոչ ծառաբնում: 5.Գանայի մայրաքաղաքը: 6.Արցախյան հերոս Դուշման ...: 7.Ջայլամի տեսակ: 8.Աչքը թարթելու տեւողությունը: 10.Կոմիտասի երգերից: 12.Ժամանակի միավոր: 16.Վրացական հանքային ջուր: 18.Անձնական դերանուն: 23.Վրացական ֆիլմ: 24.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 25.Վանքային համալիր Արցախում: 27.Ռոբինզոն Կրուզոյի «ընկերը»: 29.Քաղաք Հունաստանում: 30.Կարի մեքենայի մաս: 31.Գյուղ Արեւմտյան Հայաստանում: 34.Մայրցամաք: 38.Միանիշ թիվ: 40.Լեռնագագաթ Վրաստանում: 42.Հոգնակիակերտ մասնիկ: 44.Բամբակի «ծաղիկը»: 46.Հայոց Գեղամա գեղեցկուհին: 47.Հայոց թագավոր: 49.Հրազդան քաղաքը նախկինում: 51.Վրաց գրող Սուլխան- ... Օրբելիանի: 54.Զույգ թիվ: 56.Ցուցական դերանուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Պնդուկ: 8.Ագարա: 10.Սուրճ: 11.Ցար: 13.Գուսան: 14.Ադիդաս: 16.Կճուճ: 17.Ռուս: 19.Ճահիճ: 21.Նինո: 22.Կար: 23.Գայլ: 27.Նավթ: 29.Գավառ: 32.Գնա: 33.Բրա: 35.Ռասա: 36.Ցորեն: 37.Քնար: 39.Էքս: 42.Կտավ: 44.Պատանի: 46.Հարդ: 49.Ջահ: 50.Նոտա: 53.Կասա: 54.Բայ: 55.Սեն: 56.Սանր: 57.Քար: 58.Կոնգ: 59.Ոսպ: 60.Տիկ: 61.Խաղ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ընդունակ: 2.Ճկուն: 3.Գաճաճ: 4.Կավիճ: 5.Բացառիկ: 7.Ուսադիր: 9.Ուր: 12.Ասուն: 15.Դուրյան: 18.Սոխ: 20.Հալվա: 24.Անգիր: 25.Լվացք: 26.Կռան: 28.Տրե: 30.Առոք: 31.Ասք: 33.Բրուտ: 34.Անիվ: 38.Առաջ: 40.Սիրանո: 41.Մահարի: 42.Կին: 43.Անտենա: 45.Տաբատ: 47.Ակա: 48.Դարս: 51.Ոստխ: 52.Անգղ:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445